


ЧГЧА-ЧАР
Четыре ящика
пирожных



ՍԿԱՆԴԱՐ

-6 NOV 2011

ՄԻՐ ԿԼՈՒԻԲԻ ԼՕՏՈՒ ԻՍՏՈՐԻԵՆ

≡ԼՕՏՈԲԱԶ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՒ ԱՂՋԿԵՐԱՆՑ ԱՐԱՐՄՈՒՆՔԸ≡

Եւ նրանց սեփականութիւնը

Բ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ.



891.99
U-57

ԹԵ Յ. Ա. Խ. Ա

Արտադրություն ՀՀ պատմություն № 17
1912

1634
6 NOV 2011

„ՀՐԵՑԻ“ ԽՈՒԹԱԳՐՈ - 2.
891.99 ար
U-57 ՍԿԱՆ-ԴԱՐՁԱԿԱՆ

ՄԻՐ ԿԼՈՒԲԻ „LOSOK“ ԻՍՏՈՐԻԵՆ

LOSOK ԱՐԴՅՈՒՆՎ ՈՒ ԱՇՋԵՐԱՆՑ ԱՐԱՐՄԱՆՔԸ

ՆՐԱՆՑ ՏՆԱՔԱՆԴԱԿԻԹԻՆԸ

1001
345
1001

bh

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱԳՈՎՈՐԻԹԻՒՆ

Խիւքի կուտի չեննիը,
Միթամ լաւ բան մողոնցին.

Կա պարագայութի խաթրու
Օդի վաճառչին» ԳՐԱԴԱՐԱՆ

1. U. R. C. S. R. A. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
7 XI - 1922
Հ. Ա. ԱԶԱՄԱՆՅԱՆ ԱՆՎԱՐ
Խանու և Խանուն անուն

Արտադրության հետարարության ելիցանակայտ № 17
1912

ՄԻՒ ԿԱՌԵՒ «ԼՈՅՈՒ» ԻՍՏՈՐԻԵՆ
ԵՒ ՆՐԱ ՀԻՄՆԱԴՐՈԹՅԻՆԸ.

Հոտոքազ-մարդկանց ու աղջկերանց արարմոնքը եւ
նրանց տնաքանդումինը:

I

Մէ օր մէ չլէն «չլա» մտաւ,
կփրեմ վերդին հիդ բացարաւ՝
Մերաշ մէջը ցիփիր գտաւ,
Ննդրտերանց իմացարաւ՝

Միր կլուքը դախոդ չունի,
՚իս գուզիմ մէ բան մոգոնիմ,
էս միր աղչկերանց համա
«Լոյու» սարքիմ մէ քիչ օգնիմ.

Համ գելուքը շատ տուն գուքա,
Համ շաղաւաթ կուլի կասին.
՚իս շատ ժուգէ վիքրիմ անում,
Աստուծ վկայ էստուր մասին:

Լոտօբազներուն հարցըրի՝
Դիմ միանա խելքաթ տեսան,
Դիմունանցը ուրախացըրի,
Գլխապատառ դիմ էլ գուքան...»

Զեննիրը ուրախացան՝
Սազաստ էլան դիմ միանայ,
Էս իմ միտքս խիստ հաւնեցան,
Ճաշ սարքեցին լոթի՛ անայ:

Իստակ էսէնց միր կուր
«Լոտօ» խաղալ մողա ննգաւ,
Էլ չին գնում դիդուրումը.*)
Ինչ փուր էստի օբա ննգաւ:

II

Էս էր պակաս միր քաղաքին՝
«Լոտօ» խաղալ մողա բերին,
Չին զնջանում հարուստ թէ լի՛ դճ
Կուրնին վազում քիսեն ձեռին:

Տուն ու տիղը վերին ածում՝
Մարթ, էրէխէք չին հարցնում,
Ըսկի այնումը չին գցում
Էլած չէլածնին կորցնում:...

*.) Էս միր Թիֆլիզու քաղաքի աղջիկները, սովորութիւն ունէին ամէն երկուշարթեքը Դիդուրի եկեղեցում համբուրելու գնալ:

Ասումին մէ վիկանիլը՝
Իսուն—հարնւր մինալթուն է...
Զարխով է նումըրի հանիլը,
Նա կուտանէ ով զարթուն է:

Կազնաչախն էլ նշնած է՝
Սուսան Ստեփան Ալանի՛ չը,
Բալատիրովկով ջոկած է,
Նա է խաղի կարքադրիչը:—

Գնանք տէննինք վունցին խազում,
Լաւ մտիկ տանք էս թամաշի՛ն,
Վունցին տիպում, կամ ծիծաղում,
Կամ թէ ով է լոտօբաշին:

Ստոլի բոլորք նստոտիլին՝
Րանգէ ըանգ լոտօբազնիրը,
Ամեն թաղեմէն էկիլին,
Լաւ գոված զոմարբազնիրը:

Թէ վուր չունին փուղին ճարում...
Կլուբնին գնում փուղ գաղելու
Էրծաթ, պղինձ գրաւին գնում,
Կէս գիշերին թըրև գալու:...

III

Ամէն թաղից մողին էլի,
Վուրը թողնիմ վուրն ասիմ,
Ի՞նչ թաղկացնիմ անումնիրը,
Թէ վուր գուզիք մէկ մէկ կօսիմ:

Մէկն էր՝ Մազմանինց-Փեփելն,
Չուքի-բաշմակէնց Մափէն,
Գոճիս-Փեխօխնց-կեկէն,
Տակէտակ-Քելա-Մալոմէն:

Էլի Բողվիանինց-Շաշոն,
Ու Ալանգաղինց-Թալալը.
Միր Խուրո-Մարքսենց-Մաշոն,
Ու Կարսուկանինց-Մալալը:

Զարխի մօտիկ նստոտիլին՝
Սուտ «Զիբլիբօի» դոխտուրը,
Գոված Թլախոխնց-Գալուստը
Փոխադեզմաղինց-Մխտուրը:

Զգրու կարտիր էր վիկալնում՝
Ղոմարբազ «Քալ-բիճն-Կէկոն»
Նոմիներում չէր սխալվում,
Միր «Եաղու ուտողինց-Փեփոն»:

«Զիբլի-շամդան»-Լիզին տեսէք՝
«Տլիցետ-տլի» նումերն է ուղում,
Օչովուն անգաճ չէ դնում,
Նա իր «Տլիցետ-տլին» է անում:

Հինգ-վեց կարտիր ծպալիլ էր՝
Տակն էր դրի վրեն նստիլ էր,
Զարմանք բան է էնքան խալխում,
Գետնի պալոն վհւնց գողցիլ էր....

Քաշալ-Եփրեմը, Կոմպրոմը՝
Գուղութիւնը վնւր բռնեցին,
«Շամդան-Լիզին» պանչուր տալով,
Մէրաշ բաղից դնւրս արեցին:

Բոշա-Մոսեսինց-հարս-«Այոն»
Հեռացիլ էր ջուգ նստիլ էր,
Ակոէք-շինող-բժշկի հիդ
Թաքուն թաքուն քչփշում էր:

Եղալու Մարքիսն ու «Ժակոն»
Մահլում արի խիստ ջպածին
Երանց մօտ էկաւ չոլախ-Նակոն,
Հարցըրուց՝ թէ ի՞նչու տխրածին:

— Ի՞նչիս ասում տօ գժվիլիս,
Մտիկ արէք էս անգալին,

Մէմէ թուման տանուլ տւինք,
Զիս հարցնում, էս միր հալին...

—Նակոն ասաւ՝ իս ձիգ միղա,
Մէ բան կօսիմ, ինձ բախշեցէք,
Տանուլ տւած է... ով կու խաղա,
Էս մասալէն լաւ իմացէք:—

Պատկովինց-Ելիսաբեթին՝
Խաղը զայդումը չէր դալի,
Զգուռ քաջում էր բուրնութին,
Չունքի փուղ էր տանուլ տալի:

Քինթ-ծակ-Մաթոն օրշառում էր,
Սուրդո ունէր փոշտում էր,
Զալդ-ջալդ կարտիր էր փոխիխում,
Աչկածակ էր անկշտում էր:

Քեչա-Շաշինկէն փուր տեհաւ՝
Իրա բանը չէ յաջողվում,
Զարա կտրած ննզիր դառաւ,
Հիմի ուրիշ տիղն է փոխվում:

Հացի-գելինց Մարթէն տիրած՝
Քնթի տակն փնթփնթում էր,
Վարթիկոփինց կատոն ջղրած՝
Կլուր շինողին խիստ օխնում էր:

Փափակուշինց չոլախ-Լիղէն՝
ըիք անգամ փուղիր տարաւ,
Ուրախ-ուրախ ածաւ քիսէն,
Խալիսի քեփն խարաբ արաւ:

Կէս գիշերն է...—մէ քիչ կացէք՝
Յանկարծ գուրս եկաւ «տրոիկէն»
Դավունա... կանչից՝ դէհ իմացէք
Օշտաղուրի սիւ-կատինկէն:

Շատը ութ կարտ էր վիկալնում,
Էգերա գուր փուղիր տանէ,
Էստով էլ գուշինչ չէր դառնում,
Տեսնում էր գուր դարդակ բան է:

Շատն էլ իրա տիղն էր փոխում,
Ուրիշի հիդ ննզիր դառնում.
Բողմից ճիճինի էր դալի,
Ու շուտ շուտ կարտիր էր առնում:

Վերջին խաղան վիրջացաւ՝
Մինձ դալմաղնվ ու մարաքնվ,
Շատն իր դալը փոշընեցաւ,
Բողազն էր պատում իր անիծքնվ:

Մինչ կէս գիշիր տուտուց, սարսաղ՝
Փուղիր է փուր տանուլ տւեցին,

Ճիճապատառ ու բեղամաղ
Մոգոնողին անիծեցին:

IV

Օվոր տարաւ ուրախացած՝
Իր տուն գնաց ծիծաղելով,
Տանիլ տւողն սիրաը կոտրած,
Իր տուն սիւցաւ անիծք տալով:

Մազրամ ամէն բանը սուտ է,
Մարթ պիտի իղբալ ունենայ,
Ի՞նչ վուր անէ անօգուտ է...
Ի՞նչ շահ, թէ վուր բաղդ չունենայ....

Մէկն գնալիս էս էր ասում,—
— էս ի՞նչ բան էր գլխիս էկաւ,
Քորոցնիրը զրի կասում,
Մազրամ զլխիս լաւ բան չէկաւ

Հինգ-վից տիղ տերնո ունէի
Իմ նումերը չէր դուրս գալի.
Սիւ սրտովը լաւ չէր խառնում,
Չարխը լաւ չէր պտուտ տալի...

Ագոր աղջիկը ծուցս դրի
Էգեր լաւ էր էկի բանը.

Էնդով էլի վուչինչ չելաւ,
Գնալիս մէ քինթ էկաւ տանը:

Չուրս անգամ թուղթ բաց արի,
Դիփ լաւ-լաւ թխտիր էր գալի,
Չուրս «Կիկօն»-Ագոր «տամնանուցը»,
Ինձ մինձ ումիկնիր էր տալի....

Քորոցնիրն էր «Սոն»ի դարդը՝
Զէր ուզում իմանայ մարթը,
«Պետիա» ունէր, սրտի վարթը,
Նա կու թափէր ճակտի զարթը՝

Սոնէն Պետրին իմաց արաւ՝
Մարթու թաքուն էրի տանը,
Հարկներուն չիմացարաւ,
Սոնէն իրա ծածկած բանը:....

Պետիէն էր իդիալը,
Առանց նրան չէր դիմանում.
Ճամփին իմացայ ափալը.
Մարթը վուչինչ չէր իմաննւմ:....

Էսպէս բանիր է պատահում՝
Փուղի խաթրու միր քաղքումը.
Էլ ի՞նչ նամուս, Միրաթ կուի
Էս բանն ըլի օջախումը:....

—

V

Կլուբի «Լոտօն» բրիշակ ըլի՝
Շատ տուն ու տիղ խարաբ արաւ,
Խիղճ-մարդկերանց տունը քանդից
Շատին էլ վարթարափ արաւ,

Օջախում էրծաթ չը մնաց՝
Դիմ միանայ զբաւ դրին
Էն էլ ձեռներեմէն գնաց...
Տորպով ծախսից հիդ չը բերին:

Աղջկիբքը գարդպնա էլան՝
Մինչև լուսը թրկին գալի...
Մունդրէկ լոտօի սաբաբով
Էլ սիրաթով... չին մանգալի:

Խելքի կոլոփ չլէննիրը
Միթոմ լաւ բան մովոնեցին,
Կլուրի-կասի սարփի համա՝
Անիծված «Լոտօն» սարքեցին:

Էլի կօսիմ լաւ բան չարաւ՝
«Լոտօն»-Լոտօրազութիւնը,
Օջախնիրը խարաբ արաւ,
Անտէր զոմարբազութիւնը:

Էս բանն արաւ «Կլուրի-լոտօն»,
Շատ մարթկերանց խայտառակից,
Դովրանումն է չոլախ-կատոն.
Շատ վուղ տարաւ, շատ աշխատից:

Մինչ կէս գիշեր տուտուց-սարսաղ՝
Փուղիր է, վուր գէն ածեցին.
Ճիճապատառ ու բեղամաղ,
Մոգոնողին անիծեցին:—

Սասթի մէկն անցեր կացի,
Իփոր ես իմ տունը հասա,
Ի՞նչ պակաս էր թամամեցրի
Դիմի ի՞նչ տեսայ, ու վրա հասա:

Իս էլ հանգարտ թուղթ ու մատիտ
Ծուցաջիբումս զրեցի,
Իրանց բոլոր արարմունքը
Դիմ տուկրան-տուկրան գրեցի:

1910 ամին

Վ Ե Բ Զ

Եղբայր եթէ դատարկ է՝
Աբասերուց գրպանդ,
Ոչոք քեզ բարե չի տայ,
Ու խիստ բուրթ է քու բանդ:

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԳԵՐ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ժ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գ. ՍԿԱՆԴԱՐՆՈՎԻ

Երբ որ ունեմ «աբասին»՝
Բոլորն էլ ճանաչում են,
Որտեղից ես անցնում եմ,
Միշտ թաւազրվ կանչում են:

Դիմ ասում են՝ համեցէք
«Դուք մեր գլխին տեղ ունէք,
«Խնդրեմ պարոն նստեցէք,
«Դիտենք ազնիւ ցեղ ունէք:...»

Երբ շորերս թազա է՝
Դիմունք ինձ մոտին գալի,
Իսկ թէ հին է ու մաշուած,
Ոչոք բարե չի տալի:...

Հիմա չար ժամանակ է՝
Թէ անփողես չես յիշվնւմ,
Որբան ուսում ունենաս,
Թէ չունես, մարդ չես կոչվնւմ:

Իսչ վախտ չը կայ ջիբում՝
Էն անիծուած «աբասին»,
Ուշադրութիւն չեն դարձնում,
Բոլորովին իմ մասին:...

Արի եղբայր ինձ լոէ՝
Ու հաւատայ իմ խօսկին՝
Մարթու տեղ չեն դնի, թէ,
Չունիս «աբասի»-ոսկին:...

Նորին Վեհափառութեան հանգուցեալ Խրիմեան
«Հայրիկի» Կաթողիկոսական ընտրութեան ժամա-
նակ,

Գրեց այս երգը Ականդար-Նովեն:

(Անկանոն Պատգամաւորների ընտրութիւնը, որ
եղաւ 1892 ամին, Մարտի 8-ին «Նահանջ տարին».)

Վատ բան արաւ նահանջ տարին՝
«Արձագանքին», «Նոր-Դարբին»,
Խելքն ու միտքը իսպառ խառնեց՝
Արգարին ու Սպանդարին:

Նահանջ տարին ինչեր չարաւ
Շատերին ախմախացրեց,
Պոզաւորին կապալ տուաւ,
Պոչաւորին խենթացրեց:

Մարտի ութին հաւաքվեցան՝
Դիմեցին Նախազահին,
Բայց նա յանդուգ գոռողութեամբ,
Գուզէր իւր կողմը նային:

Երբ որ տեսան «Մշակականք»
Անմիջապէս հեռացան,
Միւս կուսակցից ընտրվեցին,
Իրանց օգտին... շլացան.

Խառն ու խարդախ ընտրութիւնը
Նախագահը հաստատեց...
Եւ շահամոլ տգէտներին
Մի ոմն շնորհաւորեց...

Խիստ անկանոն պատգամաւոր՝
Ընտրեց ինքն Արգարին,
Խսկ կանդիտատ—սեպոչաւոր,
Սուտ ազգասէր Սպանդարին:

Ինչև իցէ ընտրվեցան,
«Արձագանք». «Նոր-Դարականք»
Հրճվում էին... երգում էին՝
Խառն գայլի շարական:

Արգարը, որ միշտ ծաղրում էր՝
Վաճառականաց դասը,
Յանկարծ նորա մօտ երևեցան,
Միայն մի տիմար մասը:

Նախապէս խարդախութիւնը,
Նոցա չը յաջողուեցաւ...
Բամբակի տեղ, բռւրթ դուրս եկաւ,
Անկանոն համարուեցաւ:...

Մարտի ութի ընտրութիւնը՝
Նախագահն էր վագերել:



Էջմիածնիցը հեռագրեցին,
Ոչ չորս ձայնով է բեկանուել...

Նոր ընտրութիւն յայտարարուեց՝
Աղվանեանի տեսչութեամբ—
Եւ մի ձայնով ընտրուեցաւ,
Արծրունին ճշմարտութեամբ...

Վերջ ի վերջոյ լոյսն յազթեց՝
Ճշմարտութեամբ խաւարին...
Եսականներին վոնդեց,
Ընտրեց ճշմարիտ մարդին:

Անանուն թերթի խմբագրին՝
Մարդու տեղ չը համարեցին,
Նորա համար տուփ չը դրին»
Անարժան է սոսացին:...

Շատ բրթեցին, շատ խրթեցին,
Ոչինչ օգուտ չը ստացան...
Եւ դաւաճան «Վասակի»-պէս,
Ամէն կողմից սևացան:...

Արծրունին ընտրուեցաւ
Արժանի պատգամաւոր...

Նորա խօսքը արդարացաւ,
Ճշմարիտ և փառաւոր:...

Նահանջ տարին այս բանն արաւ՝
Կեղծաւանդապահներին,
Թշուառութեան մէջը թողեց,
Կարօտ իւրեանց շահերին:

Նախագահը ճարահատեալ,
Այլ միջոցներ է սկսել...
Տաճկահայ պատգամաւորներին,
Իւր որոգայթում որսել:

Ո՞վ Նախագահ բաւական է
Ազգին մի դաւաճանիր,
Արբանեակացդ խորհրդով
Նախանձ սերմեր մի ցանիր...

1892 ամին, Մարտի 10-ին



ԱՅԺՄ ԳՐՈՒՄ ԵՄ ՀԱՅՈՑ ԵՐԳԵՐ

Այժմ գրում եմ հայոց երգեր՝
Պատճառ հայ եմ ծնուել,
Եւ յիշում եմ հայրենեաց սէր,
Նորա հողովն են սնուել...

Մինչև հիմա վրաց ազգին՝
Անդաղար ծտուայեցի...
Նոցա չոր ու ցամաք այգին...
Մեծ ջանքով մշակեցի:

Բայց իմ ջանքը իզուր անցաւ,
Ոչինչ արդիւնք չը տուեց,
Ինձ պատճառեց՝ տրտմութիւն, ցաւ,
Սրախ տիրութիւն, տիրեց:—

Իմ այգին անտէր թողեցի...
Դարձայ այլոց այգեպան...
Սակայն առաջ չը մտածեցի,
Որ այլք չեն տալ ոչինչ բան...

Հային պէտք է հայ-ազգ սիրէ,
Ոչ թէ սնապաշտ օտարին...
Լոյսը միշտ պէտք է համակրէ
Եւ հալածէ խաւարին:

1879 ամիս:

ՈՎԵ ՄԱՐԴՔԸ

Մարդը նա է-չը գիտէ սէր—
Կեանքը ուրախ անցկացնում...
Քէֆէ անում... օր ու գիշեր,
Բայց խեղճ-մարդու չէ հարցնում:

Մարդը նա է՝ յաճախում է՝
Թատրոն, կլուք, մասկարագ,
Լկտի կանանց հետ ծախսում է,
Շոայլ փողեր միշտ առատ...

Մարդը նա է՝ որ չէ գիտում,
Բարեգործի նպատակ...
Դոշ, սարդինկա, խաւեար ուտում,
Գինի կոնծում համարձակ...

Մարդը նա է՝ գիրք չէ կարդում,
Եւ չէ սիրում լրագիր,
«Աղբիւր-Տարագ» նա չէ յարգում,
Խելքի բան չի... զրադ դիր:

Մարդը նա Է-Օրթաճալում՝
 «Յոցխալ-փիչխուլ» է սիրում,
 Զուրնաշերուն կողքին շարհւմ,
 «Կինտոներուն» հրաւիրհւմ...

Մարդը նա Է-որ սնանկանում է
 Փողեր տակով է անում.
 Թէ փող ուզես, բարկանում է,
 Գիշերը քուն չի տանում:

Մարդը նա Է-իւր խեղճ ազգին՝
 Չէ օգնում, չի պաշտպանում,
 Հայակերին յոյժ սրտագին,
 Ցարգանքով է պահպանում...

⁴⁰ Մարդը նա Է-փողի պահանջ
 է շինել լոկ իւր անձը,
 Այնպէս մարդն է-«երկար-ականջ»
 Որ կտրել է իւր սանձը...

Ես թքել եմ այնպէս մարդին՝
 Եսական է, անպիտան,
 Չեմ զարմանայ նորա փառքին,
 «Բազազ է» թէ Միկիտան...

Չ Ա. Բ - Լ Ե Զ ՈՒ

Ի՞նչ ես ուղում ինձանից՝
 Վատ անիրաւ չար լեզու,
 Ինչու գործից զրկում ես,
 Թողնում ես անձար-լեզու:

Ասա ի՞նչ էր պատճառը՝
 Չորացրիր կեանքիս ծառը,
 Քո ասած ամէն բառը
 Ինձ էրէց, թշւա՛ռ լեզու:

Օձի նման թոյն ունես,
 Իսկի խղճմտանք չունես,
 Սատանի պէս անքնւն ես,
 Չես տալի դադար-լեզու:

Անմեղ բաղդիցս զրկեցիր՝
 Քարքարոտ տեղ տնկեցիր,
 Ամէն կողմից զբնեցիր.
 Կլխիս տւիր քար լեզու:

Որդուն հորից հանում ես
Մէկ մէկուց բաժանում ես
Շատին քաղցած սպանում ես,
Տալիս ես ազար լեզու...

Յուղան չար լեզով չարեց՝
Որ Յիսուսին վաճառեց,
Չղջա՛ւ ու ծառից կախուեց.
Ընկաւ...միշտ խաւար լեզու...

Անպիտան է քո վարքը՝
Օձի թոյն է արարքը,
Ընկնես սատանի շարքը.
Ման գաս սարէ սար լեզու:
Քեզանից խարուեց Աղամը,
Ճաշակեց պտղոյ համը,
Չը կատարեց պատգամը,
Անիծուեց, յիմար լեզու:

Մէկ լաւ նայիր, այս դարին՝
Մի յետեիր դու շարին,
Խղճակի մեր Սկանդարին
Թողեցիր անճար լեզու:

1884 ամի.

ԿԵԱՆՔԻ ՕՐԵՐ

Կեանքիս օրեր պակասում է՝
Զեմ ունեցել ուրախ կեա՞նք,
Ժամանակին ինձ ասում է,
Պիտի տանես միշտ զրկանք:
Ի՞նչ է իմ կեանք,—որպէս երազ,
Մի օր, լաւ օր չեմ տեսել
Հող եմ հերկել միշտ վազէ վազ.
Մնում է ինձ կալ կալսել:—

Բայց հացին չը արժանացայ,
Այս տանջանքիս... վոխարէն
Փո՞ւչ աշխարհում չուրախացայ,՝
Այս էր օրւայ իմ պարէն:

Կեանքիս թելեր կտրատվում է՝
Ինձ տանում է կայարան,
Եւ օրհա՛սը մօտենում է,
Տանել վերջին բնակարա՞ն...

1887 ամի.

ԽԵԼՈՔ ՄԱՐԴՈՒՆ ԲԸՐԵՒ ԿՈՒՏԱՄ

Ա. Ռ. Ա. Գ. Ա. Ս

Առագաստս պատառեցաւ
ել չեմ կարհղ ափ իջնել,
Յանկարծ նաւս ջախջախեցաւ,
Ինձ ալիքին եմ յանձնել...

Գուցէ բաղդս ինձ յաջողի՝
Ալիքները դուրս նետեն.
Ես ափ կանգնեմ,—փա՛ռք ստեղծողին
Ինձ փոթորկից ազատէ:—

Ա՛խ թէ տանեն հեռու աշխարհ՝
Եւ ես մնամ մոլորուած.
Ո՞վ կը ցոյց տայ ինձ հայրենիք,
Պիտի մնամ անջատուած...

1887 ամի.

Խելօք-մարդին բարև կուտամ
Յիմարի հետ գործ չունեմ,
Հասկացողի հոգուն մեռնեմ,
Տիմարի հետ գործ չունեմ . . .
Խիղճ ունեցող մարդ եմ վնասում
Տաւարի հետ գործ չունեմ,
Ամենայն ժամ լոյսն եմ պատում,
Խաւարի... հետ գործ չունեմ: —
Յիմարի կողքից չեմ ման գայ,
Նորանից խելք չեմ ստանայ,
Նորս անմիտ խենթ խօսքեր
Լաւ է, որ մարդ չիմանայ . . .
Յիմար մարդուց հեռու մանգամ,
Որ սիրտս չը նեղանայ.
Որքան գուցէ թող նա հաչի,
Սարսաղի հետ գործ չունեմ:
Դիոգինէս փիլիսոփան՝
Լապտերով մարդ էր վնասում,
Կակաչ-ծաղկին հոտ չէր քաշում,
Հոտավէտ վարդ էր վնասում . . .
Յիմարի զգեստին չէր նայում.
Խելօքի զարդն էր վնասում . . .
Նորս ստուերին հետեւում եմ
Խելարի հետ գործ չունեմ:

Եղբայր Յովսէփի խորհուրդ չեմ տայ՝
Որ յիմար մարդին լսես.
Այնպէս մարդից հեռու կացիր
Չարժէ նորա հետ իօսես...
Ծաղր կանէ նա քո վերայ,
Որքան խելօք բան ասես.—
Ես միշտ բարի ծառն եմ սիրում,
«Չար ծառի» հետ գործ չունեմ...
1879 ամի, ի 5 Մայիսի:

ԼՍԻԹԻԹԻՒՆ ՊԱՐԺԵՑԻՐ

Լաւութիւն պարծեցիր, եղբայր յաւ բան է՝
Վասութիւնից ոչինչ շահ չես ունենայ,
Մարդու կեանքը անմեղ երազի նման է,
Չար մտքերով ոսկէ գահ չես ունենայ...
Աշխարհն հինգ օր է, հինգ էլ միշտ սև է,
Այս ունայն աշխարհից ի՞նչ պիտի տանես.
Խեղճ-մարդու զբնիլը, անդութ անձի է
Ոչինչ չես վաստակիլ այդպէս բան չանես:
Քո հրաժեշտի օրն, հինգ գաղ կտան է՝
Չորս տախտակիցն է շինած, է քո դադաղն,
Բարի անուն վաստակիր, ամենից լաւն է,
Այստեղ կմնայ քո բաղչա՛ բա՛ղը...
Առածներ շատ կայ, -ասել եմ ուզում՝
«Լաւ է անուն բարի» քան զգանձ բազում, -

Բայց ագահ մարդը, -փողն է երազում, -
Ի՞նչ գուղէ խրատես, իր էշն է քշում...
1903 ամի.

ԽԵՐԱՋ ԿՈՂՏԵԿԻ-ՑԳԻ ԽԵՂԻ Մուխամբազ

Ինձ բեղամաղ արաւ մէ փնթի խարազ¹),
Կոապաշտ, անհոգի... մինձ քնթի խարազ²):

Սաղ խարազվանումը դիմի էլ ատումին,
Նաքազութիւնից դիմի գանգատումին.
Բեղասլութիւնից սուփրից զատումին.—
Մինձ քնթին սազում է բուրնութի խարազ:

Ինչ կոնիս էդքան փուղ վուն կիտումիս,
Ամառ-ձմեռ զանձիլի պէս հուտումիս.
Ոչիներու մէջն շապկով փթումիս . . .
Փոշտալիս ասումին զպթի խարազ:

Հարկներու համար գուն իծի ցաւիս,
Դուքնումը վերննպած, մէ կոտրած գաւիս,
Բազկթան խփշտէ, թէ վուր ծառաւիս,
Դէ չոռլամիշ արա, դէ խրթի խարազ.

1—2) Վերևի երկու տողը, պէտք է կրկնէք ամէն
տան վերջում:

Ականդար-Նովուն ի՞նչի բեղամաղ արիր,
Զուր չը տւիր էտով սրտին դաղ արիր,
Համքրի մէջն գլուխդ բայրաղ արիր,
Շատ անտաշ, կոպիտիս . . հարուրդի խարազ:

1874 ամի.

Խ Ե Բ Բ Զ Ի (Կոշկակարի) Յ Ի Ե Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Լ

Ի՞նչիս մտածում ուստա Փարսիդ՝
Ի՞նչուիս դարդուտ նստած,
Առուտուրդ վհւնց է գնում,
Խօ մուշտրուց չիս նիղացած:

Աղպէր սիրտդ ուրախ պահէ,
Ի՞նչ ունիս դարդ անելու,
Դարդի գեղն է երկու շահի,
Դրգիմ արադ բերելու:—

— Երանի քիզ ուստա Գասպար
Բիր բաշ, բիր տաշ տղայիս,
Օղուշաղդ չէ նեղացնում
Դու քոյ զիսի աղայիս:
Ի՞նչիս ասում, մէ իմացի—
Խսկի չունիմ առուտուր.
Շահի չունիմ զրգիմ հացի.
Էնդուր համախմ տխնւր:

Իրիք օր է նվ է ծախի՝
Լափչիք-քոշիք-ծուղէքը,
Փուղ էլ չունիմ, վուր տամ ցախի,
Չը մրսին էրէխերքը:—

Էսէնց ձմեռ կորչի գնա՝
Ախար ի՞նչ է միր հալը,
Էսքան դարդին մարդ վհւնց դիմնայ
Ու քաշէ դալմաղալը:

Ի՞նչ վուր սապոգն լուս ննգաւ՝
Միր բանը խարաբ էլաւ,
Լափչիքը ոչով չէ հաքնում
Էլ վունց ջահիլ, վունց պառաւ:

Բջիրքն էլ չին լայիդ անում,
Քոռութենին մտիկ տնւ.
Նրանք էլ պոլսապոչկի են հագնում
Արի նրանց ջուղաբ տնւ:

Կնեազ-քեղխուզա, աղէքը՝
Դիփ լափչիք կու հագնէին
Միրուն նախած քոշիք-ծուղէքը
Հարսներուն կու տանէին...

Էս պոլսապոչկա, սապոգը՝
Իստակ միր տունը քանդից,

Դարդեմէն միր «ԴԱ-Ակոբը»,
Հանկարծ հոգին աւանդից:

Գնաց էն միր ժամանակն՝
Գնաց էլ հիդ չի դառնայ
Էս միր զողալ դազգի վրայ՝
Յամաք հաց չինք ունենայ:

Առուտնիրը դրած կուլէր
Դազգին սխտուրով խաշը,
Թաց խելադէն կու կլկէր,
Ինչկու գուքէր միր ճաշը:
Ուրախ—ուրախ, քէֆ էինք անում՝
Դարդ չունէինք փուղինը,
Շաբթում մէկ օր չէինք բանում,
Պարտք չունէինք դաբղինը...

— Ի՞նչիս ասում, -ուստա Գասպար,—
Դարդից բողմախմ գալի.
Վաղ ունէի հարուր կախապար,
Ծախսին ջուղար էի տալի:

Ի՞նչ տեսիլինք, էլ չինք տեսնի՝
Էն քեֆիրն ու մարաքէն.
Դազգի վրայ «քինով խաշը»,
Թաց խելադէն ու չարեքէն:—

1875 ամի:




ՀՀ Ազգային գրադարան



NL0368619

Այս գրքոյիլը ծախւում է բոլոր գրա-
վաճառանոցներում։



55478